ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓԲԸ

REPUBLIC OF ARMENIA
SHIRAK"S REGION
GYUMRI MEDICAL CENTER
CJSC

Հայաստանի Հանրապետություն
Գյումրի, Գ.Նժդեհի փ., 3/3
Էլ/հասցե՝ gyumrimc@gmail.com
Հեռ. - (0312) 3-03-11

Republic of Armenia
Gyumri st.G.Nzhdeh 3/3
E-mail: gyumrimc@gmail.com
Phone: (0312) 3-03-11

N 1046 «03» սեպտեմբեր 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով «Գյումրու բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ին (հասցե՝ ՀՀ ք. Քաջազնունի փողոց 11/23 բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ, Հ/Հ՝ 1570079718470100, ՀՎՀՀ՝ 02656691, հեռ.՝ 041551510) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ն, արդյունքում կողմերի միջև 05.04.2024թ կնքվել է **«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16-4»** ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

2024 թվականի օգոստոս 16-ին ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի N 03//07445-2024 գրությամբ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ծանուցվել է «Էսգեթ Ֆարմա», «Էսգեթ Ֆարմ» և «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությունների փոխկապակցվածության մասին, իսկ «Էսգեթ ֆարմա» ՍՊ ընկերությունը մինչև 2025 թվականի հունիսի 20 -ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2024 թվականի օգոստոսի 23-ին «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ն պաշտոնապես ծանուցվել է Պայմանագրի միակողմանի լուծման մասին: Պաշտոնապես ծանուցվելուց հետո «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ն մինչև սեպտեմբերի 2-ը ներառյալ չի վճարել որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, արձանագրում եմ, որ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ն թույլ է տվել օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված

որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ին ներառել նշված ցուցակում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 23.08.2024թ. ուղարկվել է Ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում:

Հարգանքներով՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի

տնօրեն՝ Ա. Բաբայան